ԱՅՍՕՐ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐՆ Է

06.12.2020 12:00

Այսօր լրանում է Փաստաբանության ստեղծման 102-րդ տարին: Հասկանալի պատճառներով Փաստաբանի օրը հանդիսավոր պայմաններում չենք նշում:

Փաստաբանությունը, որպես իրավաբանական օգնություն ապահովող ինստիտուցիոնալ համակարգ, Հայաստանում առաջին անգամ ներդրվել է 1918թ. Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջանում:

ՈՒղիղ 102 տարի առաջ, 1918թ. դեկտեմբերի 6-ին, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդի (պառլամենտի) կողմից ընդունված Դատական հաստատությունների կանոնադրության 9-րդ բաժնի 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրվել էր փաստաբաններին, որոնք այն ժամանակ կոչվում էին երդվյալ հավատարմատարներ: Այս նորմատիվ իրավական ակտով կանոնակարգվել է փաստաբանների կազմակերպության կառուցվածքը, կառավարման մարմինները, փաստաբանների վարքագծի կանոնները և մի շարք այլ հարաբերություններ:

Օգտվելով առիթից, շնորհավորում եմ մեր բոլոր փաստաբաններին:

Փաստաբանությանը իշխանությունները հաճախ համարել են ընդդիմախոս, իսկ երբեմն նաև խանգարող ինստիտուտ, սակայն **ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԸ ԵՆՇՈՂ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ Է:**

Դրանով իսկ փաստաբանությունն իրականացնում է պետության ներսում հանրության իմունային համակարգի գործառույթը, հակազդելով պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց այն «հիվանդություններին», որոնք վնասում են պետությանը: Այս գործառույթն իրականացնում է յուրաքանչյուր փաստաբան ինքնուրույն՝ պայքարելով քաղաքացիների իրավունքների և ազատությունների համար:

Ունե՞նք թերություններ: Այո, ունենք և ձգտում ենք ինքնամաքրվել: Ունենք ինքնամաքրվելու և՛ կամքը և՛ ինստիտուցիոնալ մեխանիզմները: Տարեցտարի մեր շարքերը համալրում են բանիմաց փաստաբանները: Տարեցտարի մենք դառնում ենք ավելի համախմբված:

Կրկին շնորհավորում եմ մեր փաստաբաններին: Եղեք առողջ, հաջողակ և հավատարիմ ձեր առաքելությանը:

Տեսանյութը՝ 2019թ.

Արա Ջոհրաբյան
ՀՀ փաստաբանների պալատի նախագահ

Առաջարկվող նորություններ

23.10.2013«ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ»

08.04.2015««ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ 2015թ. ԱՊՐԻԼԻ 25-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ (ԱՄՍԱԹՎԵՐԸ)

22.12.2016ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2017ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ 11.02.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })